

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանի հանդիպումը Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակության հետ

22.04.2019



Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանն ապրիլի 20-ին ընդունել է Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակությանը, որի կազմում էին պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը, տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը, Երեւանի քաղաքապետ Հայկ Մարությանը, ՀՀ մարզպետները, պաշտոնատար այլ անձինք։

Քննարկվել է երկու հայկական հանրապետությունների, վարչական միավորումների միջև համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ։ Երկուստեք կարեւորվել է Հայաստան-Արցախ կապերի հետագա ընդլայնումն ու խորացումը եւ այս ուղղությամբ նոր ռազմավարական ծրագրերի մշակումն ու իրականացումը։ Հանդիպմանը մասնակցում էին պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ։

Աղբյուրը՝ Արցախի Հանրապետության Նախագահի [պաշտոնական կայք](#)։